— Թէ ուզում ես լաւը, Սուսանը կը տայ քեզ մի թիլիսման, այն ժամանակ ամէնը կ'երթայ՝ ինչպէս եղն ու մեղր...

— Ա՜խ, Սուսան, դո՞ւն ես, — կրկնեցի ես ուրախանալով: — Այստեղ ի՞նչ ես շինում, որքա՜ն վախեցայ ես, Սուսան, ասա՛, տեսա՞ր «նրան», թէ չէ՛ ...:

— Դուն Կարօն չես, — պատասխանեց բոշան, ամենեւին չշարժելով իր տեղից: — Դուն Սուսանին էլ չես կարող խաբել...

Բոշան դեռ չէր մոռացել իմ խորամանկութիւնը, որ գործ դրի նրա հետ արաբական մինարեթի մօտ. բայց ես կամենալով փոքր-ինչ մեղմել իմ նրա վրայ թողած վատ տպաւորութիւնը, պատասխանեցի.

— Դու խօ գիտես, որ ես Կարօի ընկերն եմ, նրա լաւ ընկերը, Կարօն ինքն ասաց քեզ: Մոռացել ես, Սուսան:

— Սուսանը չէ մոռացել, նա այդ գիտէ:

Եւ խիստ մերձ նստեցի խորհրդական կնոջ մօտ, որ այն նոիրական ծառերի հովանու տակ ինձ երեւում էր որպէս գերբնական արարածներից մէկը, որոնք միշտ կերպարանափոխ են լինում: Եւ իրաւ, Սուսանը այսօր այն չէր, որ տեսել էի առաջին անգամ արաբական աւերակներում. նա ինձ այժմ չէր երեւում այն չոր ու ցամաք, այլանդակոած պառաւը, որի վրայ չէր կարելի նայել առանց զարհուրանքի: Այլ ընդհակառակն, այսօր նրա աղօտ կերպարանքի մէջ ես նշմարում էի հետքերը վաղօրօք թառամած գեղեցկութեան: Նրա մաշոած երեսը դեռ պահպանել էր իր ազդու, համակրական արտայայտութիւնը, եւ սեւորակ աչքերը նայում էին խորին տխրութեամբ, որպէս հայելիներ, որոնց մէջ արտափայլում էին կոտրած եւ վշտահար սրտի բոլոր տանջանքները:

— Դու այն օրից յետոյ տեսե՞լ ես Կարօյին, Սուսան, — հարցրի ես, մտերմաբար նրա երեսին նայելով:

— Այսօր դեռ մարդիկը ճաշ չէին կերած, Սուսանը տեսաւ Կարօյին:

— Բայց «նրա», այն աղջկայ մասին, որ ամրոցումն է... ի՞նչ խաբար տոիր Կարօյին:

— Այդ մի՛ հարցրու. Սուսանը չի ասի քեզ:

— Դու գիտես, որ Կարօն ինձանից ծածուկ ոչինչ չունի:

— Թո՛ղ նա ասէ քեզ:

Ես տեսայ, անկարելի էր այդ գաղտնիքը դուրս քաշել ծածկամիտ կնոջից, թողեցի հարցուփորձը: Նոյն ժամուն Սուսանը իր նուրբ, շագանակի կեղեւի գոյն ունեցող շրթունքներից դուրս հնչեց մի օտարոտի ձայն, որ աւելի